

No. 51048

**United States of America
and
Armenia**

Agreement between the Government of the United States of America and the Government of the Republic of Armenia concerning cooperation in the area of counterproliferation of weapons of mass destruction. Washington, 24 July 2000

Entry into force: *25 November 2002 by notification, in accordance with article 12*

Authentic texts: *Armenian and English*

Registration with the Secretariat of the United Nations: *United States of America, 15 July 2013*

**États-Unis d'Amérique
et
Arménie**

Accord entre le Gouvernement des États-Unis d'Amérique et le Gouvernement de la République d'Arménie relatif à la coopération dans le domaine de la lutte contre la prolifération des armes de destruction massive. Washington, 24 juillet 2000

Entrée en vigueur : *25 novembre 2002 par notification, conformément à l'article 12*

Textes authentiques : *arménien et anglais*

Enregistrement auprès du Secrétariat de l'Organisation des Nations Unies : *États-Unis d'Amérique, 15 juillet 2013*

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ
ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը, հետագայում՝ Կողմեր,

զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև այդպիսի զենքի հետ անմիջականորեն կապված տեխնոլոգիաների, նյութերի, գիտելիքների ու փորձի տարածմանը հակազդելու նպատակով,

ձգտելով կանխել միջուկային, կենսաբանական և քիմիական զենքի, ինչպես նաև այդպիսի զենքին անմիջականորեն վերաբերող հումքի չարտոնված փոխանցումը, ներառյալ տարանցումը և փոխադրումը,

համաձայնեցին ներքոշարադրյալին.

Հոդված 1

1. Կողմերը պարտավորվում են սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան համագործակցություն իրականացնել՝ ուղղված զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելուն: Այդ նպատակով Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը ՀՀ Կառավարությանը, վերջինիս հայտերի հիման վրա, մշտական կամ ժամանակավոր օգտագործման համար կտրամադրի սարքավորումներ, նյութեր, տեխնոլոգիաներ, ինչպես նաև կմատուցի համապատասխան ծառայություններ և կիրականացնի անձնակազմի համապատասխան ուսուցում:

2. Սույն Հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցառումները նպատակաուղղվելու են՝

ա) միջուկային զենքի, ինչպես նաև այդպիսի զենքի հետ անմիջականորեն կապված տեխնոլոգիաների, նյութերի, գիտելիքների ու փորձի տարածման հակազդմանը,

բ) միջուկային, կենսաբանական և քիմիական զենքի, ինչպես նաև այդպիսի զենքին անմիջականորեն վերաբերող նյութերի,

չարտոնված փոխանցման, ներառյալ տարանցման ու փոխադրման կանխմանը,

գ) սույն Համաձայնագրի նպատակներին հասնելուն ուղղված այլ փոխհամաձայնեցված գործողությունների իրականացմանը:

3. Կողմերը պայմանավորվում են, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը սույն Հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտավորությունները կատարելու է անհատույց և ելնելով իր համապատասխան ֆինանսական միջոցների առկայությունից:

Հոդված 2

Յուրաքանչյուր Կողմ նշանակում է սույն Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու Գործադիր Գերատեսչություն: ԱՄՆ Կառավարության կողմից Գործադիր Գերատեսչություն է հանդիսանում ԱՄՆ Պաշտպանության նախարարությունը, ինչպես նաև այդ նպատակով նշանակված այլ գերատեսչություններ: ՀՀ Կառավարության կողմից Գործադիր Գերատեսչություն են հանդիսանում համատեղ ՀՀ արտաքին գործերի, ազգային անվտանգության, պաշտպանության և պետական եկամուտների նախարարությունները, ինչպես նաև այդ նպատակով նշանակված այլ գերատեսչություններ:

Հոդված 3

Իրենց Գործադիր Գերատեսչությունների միջոցով Կողմերը սույն Համաձայնագրի իրականացման համար կկնքեն պայմանագրեր կամ ձեռք կբերեն գրավոր պայմանավորվածություններ՝ սույն Համաձայնագրի Հոդված 1-ում նշված նպատակներին հասնելու համար: Սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված Կողմերի Գործադիր Գերատեսչությունների միջև կնքված պայմանագրերը և ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունները չպետք է հակասեն սույն Համաձայնագրի դրույթներին: Սույն Համաձայնագրի և դրա իրականացման համար կնքված պայմանագրերի կամ ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունների միջև հակասության դեպքում գործելու են սույն Համաձայնագրի դրույթները:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված բոլոր տարակարծությունները կամ վեճերը, ինչպես նաև սույն Համաձայնագրի դրույթներին 3-րդ Հոդվածով նախատեսված լրացուցիչ պայմանագրերի կամ ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունների դրույթների

անհամապատասխանության վերաբերյալ վեճերը լուծվում են բացառապես Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 5

- 1) ՀՀ Կառավարությունը պարտավորվում է հեշտացնել Հայաստանի Հանրապետության տարածք մուտքն ու ելքն ԱՄՆ Կառավարության ռազմական և քաղաքացիական անձնակազմի և ԱՄՆ Կառավարության կապալառու անձանց համար՝ սույն Համաձայնագրի համապատասխան գործողություններ իրականացնելու նպատակով:
- 2) ԱՄՆ կառավարության ինքնաթիռները, որոնք պաշտոնապես օգտագործվում են սույն Համաձայնագրի կամ դրա կիրառման համար կնքված պայմանագրերի և ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունների իրականացման համար, Հայաստանի Հանրապետության տարածքում ազատվում են մաքսային հարկումներից, վայրէջքի համար զանձումներից, ճանապարհային և այլ տուրքերից: ԱՄՆ կառավարության ինքնաթիռները, որոնք պաշտոնապես օգտագործվում են սույն Համաձայնագրի իրականացման համար, Հայաստանի Հանրապետությունում ազատվում են մաքսային զննումներից: ԱՄՆ կառավարության ինքնաթիռներով սույն Համաձայնագրի իրականացման համար բերված բոլոր սարքավորումները, առաքումները, նյութերը, տեխնոլոգիաները ենթակա են հայտարարման և մաքսային զննման հեշտացված ձևով, իսկ բեռնազրերը՝ ներկայացման համապատասխան մաքսային իշխանություններին:
- 3) Եթե ԱՄՆ կառավարությունը Հայաստանի Հանրապետություն բեռնափոխադրումներ իրականացնելու համար օգտվում է ԱՄՆ կառավարության ինքնաթիռներից, այդպիսի ինքնաթիռների թռիչքի պլանը ներկայացվում է համաձայն քաղաքացիական ինքնաթիռների հանդեպ կիրառվող Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կանոնների, ներառյալ պլանի «Դիտողություններ» մասը, որում նշվում է, որ ստացվել են թռիչքի իրականացման համար անհրաժեշտ թույլատվությունները: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը կապահովի ԱՄՆ կառավարության կողմից պաշտոնապես օգտագործվող ինքնաթիռների անվճար կանգառումը, անվտանգությունը և սպասարկումը:

Հոդված 6

Առանց ԱՄՆ կառավարության նախօրոք գրավոր համաձայնության, Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի կարող սույն Համաձայնագրով ԱՄՆ կառավարության կողմից տրամադրված սարքավորումների, նյութերի, տեխնոլոգիաների, ուսուցման և

ծառայությունների սեփականության կամ տիրապետելու իրավունքը փոխանցել որևէ անձի, բացառությամբ այն ֆիզիկական անձանց, որոնք Կողմերից մեկի համար աշխատանքներ են իրականացնում սույն Համաձայնագրի շրջանակներում, և թույլ չի տա այդ սարքավորումների, նյութերի, տեխնոլոգիաների, ուսուցման ու ծառայությունների օգտագործումը՝ դրանց տրամադրման պայմաններով չնախատեսված նպատակների համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իր լիազորությունների սահմաններում, կծեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սույն Համաձայնագրով ԱՄՆ Կառավարության կողմից տրամադրած սարքավորումների, նյութերի, տեխնոլոգիաների, ուսուցման և ծառայությունների անվտանգությունն ապահովելու համար և կպաշտպանի դրանք յուրացումից կամ փոխակերպումից:

Հոդված 7

- (1) Բացառությամբ համապատասխան պայմանագրերով նախատեսված հայցերի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է ազատել ԱՄՆ կառավարությանը դատական պատասխանատվությունից և հայցերից՝ սույն Համաձայնագրի կատարման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում որևէ անձի սեփականությանը հասցված կորստի կամ վնասի համար և չպահանջել Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունից, նրա աշխատակիցներից, կապալառուներից և նրանց ծառայողներից ցանկացած անձի մահվան կամ վիրավորվելու հետ կապված փոխհատուցում:
- (2) Սույն Համաձայնագրի դրույթները չպետք է խոչընդոտեն Կողմերին՝ իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման իրականացման առումով:

Հոդված 8

Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմական կամ քաղաքացիական անձնակազմը, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում սույն Համաձայնագրի կատարման նպատակով, օգտվում է նույն անձեռնմխելիությունից ու արտոնություններից, ինչ որ նախատեսված են վարչական և տեխնիկական անձնակազմի համար՝ Դիվանագիտական Հարաբերությունների մասին Վիեննայի 1961թ. ապրիլի 18-ի Կոնվենցիայով:

Հոդված 9

- 1) Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը և նրա աշխատակիցները, կապալառուներն ու կապալառուների